ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3513-Ա « 28 » օգոստոսի 2025 թ.

ՌՈԲԵՐՏ ՎԱԶԳԵՆԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ Մ. ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.86 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ կետով, 112-րդ հոդվածի 2.1-ին մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի հ. 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետը, Ռոբերտ Դավթյանի հետ 2024 թվականի ապրիլի 1-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետը, 5-րդ գլխի 5.1-ին կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև նրա կողմից 2025 թվականի օգոստոսի 27-ին ներկայացրած դիմումը՝

1. Ռոբերտ Վազգենի Դավթյանին 2025 թվականի օգոստոսի 29-ից ազատել «Երևանի Մ. Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2024 թվականի ապրիլի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Մ. Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների

կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրեն Դիաննա Հայրապետյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ